ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԻՑ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ (2021-22 ՈՒՍՏԱՐԻ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

28.06.2022թ.

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղն իր ռազմավարությամբ և իր գործունեությամբ մշտապես կարևորել է մասնաճյուղում ուսումնական գործընթացների անխափան և հստակ կազմակերպումը, ուսումնառության գործընթացն ապահովել է անհրաժեշտ ռեսուրսներով և մշտապես բարելավել ու զարգացրել է դրանք, տրամադրել է բարձրակարգ կրթություն՝ այդ գործընթացում ներգրավելով Մայր բուհի և մասնաճյուղի լավագույն պրոֆեսորադասախոսական կազմը, ձգտել է բավարարել իր ներքին և արտաքին շահակիցների պահանջներն ու կարիքները, և ամենակարևորը, մասնաճյուղն իր գործունեությամբ և ձեռքբերումներով ձգտում է դառնալ առաջատար բարձրագույն ուսումնական հաստատություն ոչ՛ միայն տարածաշրջանում, այլ նաև Հայաստանում:

Մասնաճյուղն իր կառավարման և գործունեության բոլոր օղակներում ներգրավում է իր ներքին և արտաքին շահակիցներին, ինչը հնարավորություն է տալիս նրանց մշտապես իրազեկված և տեղեկացված լինել բոլոր գործընթացներից, նաև դառնալ դրանց արդյունավետության գնահատման անմիջական մասնակիցներ և իրենց առաջարկներով աջակցել դրանց բարելավմանն ու զարգացմանը: Մասնաճյուղը պարբերաբար անդրադառնում է իր շահակիցների բարձրաձայնած խնդիրներին ու առաջարկներին՝ պլանավորելով իր հետագա գործունեությունը ուղղորդված դրանց լուծմանը և իրականացմանը:

Նշեք, որ մասնաճյուղի մասնագիտական կրթության որակի ապահովման բաժինը յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում տարբեր մեխանիզմներով և ուսումնասիրություններով վեր է հանում շահակիցների կարիքները և խնդիրները, հավաքագրում է նրանց առաջարկները, վերլուծում և տրամադրում համապատասխան ստորաբաժանումներին՝ համապատասխան լուծումներ առաջարկելու համար:

Հերթական ամենամյա ուսումնասիրությունն առցանց հարցման և հանդիպում-քննարկումների միջոցով իրականացվել է մասնաճյուղի 2021-22 ուստարվա շրջանավարտների շրջանում: Հարցման և հանդիպումների նպատակն էր պարզել շրջանավարտների բավարարվածությունը մասնաճյուղում ուսումնական գործընթացի կազմակերպումից և իրականացումից, պրակտիկաների կազմակերպումից, մատուցվող ծառայություններից և ռեսուրսներից, համալսարանական միջավայրից, գնահատման գործող համակարգից, գնահատման օբյեկտիվությունից և այլն:

Հարցումն իրականացվել է անանուն և առցանց, ամփոփիչ ատեստավորման քննությունից հետո, դրանով ապահովելով հարցման օբյեկտիվությունը և առավելագույն անկեղծությունը: Նշեք, որ ընդգծված տեսանելի խնդիրները հասցեային ունենալու համար շրջանավարտներից պահանջվել է նշել միայն կրթական ծրագիրը:

2021-22 ուստարում մասնաճյուղն առկա ուսուցման 7 կրթական ծրագրերով տվել է **79 շրջանավարտ**, որոնցից հարցմանը մասնակցել է **70-ը,** այսինքն շրջանավարտների **89%-ը,** որը առցանց հարցումների տեսանկյունից մասնակցության բավականին բարձր ցուցանիշ է:

Հարցմանը շրջանավարտների մասնակցության ցուցանիշներն ըստ կրթական ծրագրերի հետևյալն է.

Կրթական ծրագրի անունը	Շրջ. թիվը	Մասն.	%
Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա (ԻԿՄ)	19	16	**84%**
Ֆինանսներ (ըստ ոլորտի) (Ֆինանս.)	10	8	**80%**
Զբոսաշրջություն (Զբոս.)	6	5	**83%**
Պատմություն (Պատմ.)	7	5	**71%**
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա (ՏՄՄ)	19	19	**100%**
Օտար լեզու և գրականություն (ՕԼԳ)	10	9	**90%**
Դիզայն	8	8	**100%**
Ընդամենը՝	**79**	**70**	**89%**

Մասնակցության այս ցուցանիշները վկայում են, որ հարցման արդյունքները, ամենայն հավանականությամբ, կարելի է համարել արժանահավատ, նպատակային, հետևաբար նկատվող խնդիրներն առարկայական և ուշադրության արժանի:

Այս վերլուծության մեջ հարցման արդյունքներն ընդհանրացված են ոչ միայն ըստ կրթական ծրագրերի, այլ նաև **ըստ միջին որակական գնահատականների (ՄՈԳ)**, նպատակ ունենալով շրջանավարտների կարծիքների մեջ ընկալելու նաև բավարարվածության աստիճանը տարբեր ձեռքբերումներ ունեցած շրջանավարտների համար: Արդյունքները վերլուծության մեջ ներկայացված են միջին գնահատականներով կամ տոկոսներով:

Այստեղ պետք է նշել, որ հարցմանը մասնակցած 70 շրջանավարտներից **25-ի ՄՈԳ-ը 18-20 է**, 30-ը՝ 13-17, 15-ը՝ 8-12: Այսինք, 2021-22 ուստարվա շրջանավարտների **80%**-ը սովորել է լավ և բարձր առաջադիմությամբ և ամփոփիչ ատեստավորման արդյունքներով 79 շրջանավարտներից **36-ը** (45.6%, գրեթե կեսը) ստացել է «գերազանց», **28-ը** (35.4%)՝ «լավ», **15-ը** (19%) «բավարար» գնահատականներ: Սրանք իհարկե լավ արդյունքներ են, եթե հավելենք նաև, որ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահները դրական և բարձր կարծիքներ են հայտնել շրջանավարտների մասնագիտական որակների, ավարտական աշխատանքների բարձր մակարդակի, ուսանողների գրագետ և հիմնավորված ներկայացման վերաբերյալ:



Նշենք, որ հարցմանը մասնակցած շրջանավարտների **47%-ը** պատրաստվում է շարունակել կրթությունը, իսկ նրանցից **24-ը** (31%) արդեն աշխատում է, այդ թվում **13-ը** (17%)՝ իր մասնագիտությամբ, իսկ 10-ին հայտնի է, թե որտեղ է աշխատելու:



Այս տվյալները փաստում են, որ մեր շրջանավարտները տարածաշրջանային աշխատաշուկայում մրցունակ են և բավականին զգալի մասն սկսել է աշխատել մինչև համալսարանն ավարտելը և մասնագիտական որակավորում ստանալը, այստեղ իր ազդեցությունն ունի հատկապես SS ոլորտի և ֆինանսական կազմակերպությունների թվի աճը տարածաշրջանում և Մասնաճյուղի համագործակցությունը, մասնավորապես, մարզում գործող ծրագրավորման ֆիրմաների և հատկապես Կենտրոնական բանկի հետ:

Այժմ անդրադառնանք Մասնաճյուղում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածությանն ըստ հարցման միջոցով հավաքագրված արդյունքների:

Նշենք, որ ըստ կրթական ծրագրերի վերլուծության արդյունքում մենք ունենք <u>բավարարվածության համեմատաբար ցածր միջին գնահատականներ</u> «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» և «Պատմություն» կրթական ծրագրերի շրջանավարտների մոտ: Նրանց ցածր արդյունքներն անդրադարձել են Մասնաճյուղի կոնկրետ գործընթացների միջին գնահատականի վրա: Իսկ ընդհանուր առմամբ ԵՊՀ ԻՄ-ում ստացած իրենց կրթությունը շրջանավարտները գնահատել են բավարարվածության բարձր գնահատականներով:

Հարցման արդյունքների վերլուծությունը և հանդիպում-քննարկումների ժամանակ շրջանավարտների կարծիքները հիմնականում ևս մեկ անգամ հիմնավորում են, որ Մասնաճյուղում խնդիր ունենք ուսանողների <u>գործնական կարողությունների</u> ձևավորման հետ: Այդ խնդիրն ըստ արդյունքների, հատկապես ընդգծված զգացվում է «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» (միջին գնահատականը՝ 2.7), «Պատմություն» (2.8), նաև «Ֆինանսներ» (3.6) կրթական ծրագրերում: Սա այն դեպքում, երբ ԻԿՄ և Ֆինանսներ ծրագրերի շրջանավարտների մեծ մասն աշխատում է արդեն իր մասնագիտությամբ, հետևաբար հակված ենք մտածելու, որ նրանք ավելի մոտիկից են առնչվում այդ խնդրի հետ, իսկ ահա «Պատմություն» կրթական ծրագրի դեպքում ուղղակի հասկանալի չէ պատճառը, թեպետ հարցման ժամանակ նրանք բարձրաձայնել են տարածաշրջանում իրենց մասնագիտությամբ



աշխատատեղեր չլինելու մասին: Այստեղ ենթադրում ենք, որ գիտելիքների գործնականում կիրառելու հետ կապված խնդիրներն ուսանողների մոտ ի հայտ են գալիս մասնագիտական պրակտիկաների ժամանակ:

Եվս մեկ անգամ **ամբիոնների** ուշադրությունը հրավիրում ենք այս խնդրի վրա: Կարծում ենք այս խնդրի լուծման տարբերակներից մեկը կրթական ծրագրերի վերանայման ժամանակ մասնագիտական դասընթացներում գործնական դասաժամերի ժամաքանակը ավելացնելն է, նաև գործնական դասընթացների մատուցման մեթոդները և ձևերը փոխելը:

Իսկ ահա պետք է փաստել, որ Մասնաճյուղում ստացած տեսական գիտելիքներից մեր շրջանավարտները միշտ բավարարված են եղել:





Կրթության կազմակերպման գործընթացում Մասնաճյուղի հաջորդ ընդգծվածը խնդիրը եղել և մնում է **օտար լեզուների իմացության** և դրա մակարդակի բարձրացման ապահովման հարցը: Լեզվի վատ իմացության հարցը հատկապես խնդիրներ է ստեղծում «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» և «Ֆինանսներ» կրթական ծրագրերի շրջանավարտների համար՝ ապագա իրենց գործունեության ընթացքում: Այստեղ, ըստ մեզ ուսանողներն իրենք ունեն մեծ խնդիր կախված սովորելու, սովորելու ցանկության և նպատակների հետ:





Օտար լեզուների խոսակցական և գործնական կողմը զարգացնելու նպատակով «Օտար լեզու և գրականություն» կրթական ծրագրի շրջանավարտներն առաջարկում են հաճախակի կազմակերպել օտար լեզվով քննարկումներ, բանավեճեր և այլ նման միջոցառումներ:

Իսկ մնացած կրթական ծրագրերի համար օտար լեզվի իմացության մակարդակի բաձրացման համար, հավանաբար, մեծ աշխատանք ունի կատարելու **Օտար լեզուների ամբիոնը**:

Հավանաբար պետք է վերանայել դասախոսների կողմից օտար լեզվի դասավանդման և ուսումնառության կիրառվող մեթոդները, ուշադրություն դարձնել օտար լեզվի կիրառական կողմի զարգացմանը, ուսանողների մոտ օտար լեզվով խոսակցական և հաղորդակցական մակարդակի բարձրացմանը՝ նրանց համար ստեղծելով արտահայտվելու և խոսելու պայմաններ և իրավիճակներ, ներգրավելով հատկամես մասնագիտական գրականությունից տարբեր թարգմանչական գործունեության մեջ: Առաջարկում ենք համագործակցել մյուս ամբիոնների հետ հետազոտական և ավարտական աշխատանքների իրականացման ժամանակ և ուղղորդել ճիշտ աշխատելու օտարալեզու գրականության հետ:

Անդրադառնալով պրակտիկաների օգտակարությանը, նշենք, որ շրջանավարտները բավարարված են և գնահատել են միջինը **4.5 գնահատականով,** այստեղ ցածր գնահատականներ ունենք «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» և «Պատմություն» կրթական ծրագրերի շրջանավարտների կողմից: Չնայած բավարարվածության բարձր գնահատականներին, այնուամենայնիվ, հանդիպում-քննարկումների ժամանակ շրջանավարտներն առաջարկում էին ավելացնել գործնական դասընթացների և պրակտիկաների քանակը և նրանց հատկացվող ժամաքանակը: Այդ մասին հատկապես բարձրաձայնել են Պատմություն, Դիզայն, Օտար լեզու և գրականություն, Ֆինանսներ մասնագիտությունների շրջանավարտները:



Դիագրամում բերված արդյունքները վկայում են, որ Մասնաճյուղի ջանքերը մասնագիտական պրակտիկաների արդյունավետ կազմակերպման և իրականացման գործում տվել են իրենց արդյունքները, մասնավորապես «Զբոսաշրջություն» (միջին գնահատականը՝ 5), «Օտար լեզու և գրականություն»՝ 4.9, «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա»՝ 4.8, «Ֆինանսներ»՝ 4.6 կրթական ծրագրերի համար:



Այստեղ առանձնահատուկ ցանկանում ենք նշել շրջանավարտների կարծիքները: Նրանք փաստել են, որ աշխատանքի են ընդունվել, կամ ստացել են աշխատանքի առաջարկ մասնագիտական պրակտիկաների ժամանակ ցուցաբերած արդյունքների հիման վրա, և իրենց գոհունակությունն են հայտնել մասնաճյուղին պրակտիկաների ճիշտ կազմակերպման և լավ կրթություն ապահովելու համար:

Եվ բացի դրանից, նրանք գտնում են, որ մատուցված դասընթացներն ընդհանուր առմամբ օգտակար են և առաջարկում են ավելացնել մասնագիտական նոր դասընթացներ:





Բոլոր կրթական ծրագրերի շրջանավարտները բարձր են գնահատել ամփոփիչ ատեստավորման քննության (ավարտական աշխատանքների պաշտպանության) օբյեկտիվությունը (միջին գնահատականը 4.5), 7 կրթական ծրագրերից 4-ում այդ գնահատականը գերազանցում է 4.6 միջին գնահատականին:

Ինչպես նաև, շրջանավարտները բարձր գնահատականներով արտահայտել են իրենց գոհունակությունը ավարտական աշխատանքների գիտական ղեկավարներից աշխատանքից:



Այդ գնահատականների հիմնավորումն են նաև ամփոփիչ ատեստավորման բարձր արդյունքները, որոնք վկայում են ուսանողների և իրենց ղեկավարների միասնական արդյունավետ աշխատանքի մասին:

Մասնաճյուղը յուրաքանչյուր ուսումնական տարին սկսում է վերանորոգված լսարաններով, գրադարանային ֆոնդն ըստ ամբիոններից ներկայացված պահանջագրերի պարբերաբար թարմացվում և ավելացվում է նոր, մասնագիտական գրականությամբ, էլեկտրոնային գրադարանը ուսանողներին առաջարկում է բազմաթիվ մասնագիտական և պահանջված գրքեր, բարելավվում են համակարգչային սրահների ռեսուրսները, բարձրացվում են համակարգիչների պարամետրերը, տարբեր պայմանագրերի արդյունքնում լաբորատորիաները հագեցվում են ժամանակակից հզոր համակարգիչներով և այլն: Այսինքն, Մասնաճյուղն ամեն ինչ անում է ուսումնական գործընթացը լիարժեք և անհրաժեշտ ռեսուրսներով ապահովված իրականացնելու համար:

Չնայած այս ամենին, շենքային որոշ պայմաններ խնդիրներ են առաջ բերում, որոնց մասին էլ արտահայտել են շրջանավարտներն իրենց գնահատականներում: Այստեղ ցածր գնահատականներ ունենք «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» և «Դիզայն» կրթական ծրագրերի շրջանավարտների (ընդհանուր առմամբ նաև ուսանողների) կողմից: Հանդիպում-քննարկման ժամանակ «Դիզայն» կրթական ծրագրի շրջանավարտներն ընդգծել են նաև մասնագիտական գրականության պակասի և համակարգչային ռեսուրսների անբավարարության մասին: Ըստ շրջանավարտների, համակարգիչների հզորությունը չի բավարարում անհրաժեշտ ծրագրային փաթեթների ներդրման համար:

Հարցման արդյունքներով ռեսուրսներից անբավարարվածության խնդիր ունենք նաև «Պատմություն» և «Ֆինանսներ» կրթական ծրագրերի շրջանավարտների համար, ինչն իհարկե անհասկանալի է: Այս խնդիրն առանձին քննարկման կարիք ունի և պատճառների բացհայտման համար պետք է կազմակերպել հանդիպում-քննարկումներ ուսանողների հետ:

Որքանո՞վ եք բավարարված	ԻԿՄ	ՖԻՆ	ԶԲՈՍ	ՊԱՏՄ	ՏՄՄ	ՕԼԳ	ԴԻԶ.	ԵՊՀԻՄ
լսարանների վիճակից և կահավորանքից	2,9	4,0	4.2	3,5	4,6	3,9	2,8	3,8
համակարգչային սրահների մատչելիությունից և կահավորանքից	3,4	3,9	4,2	3,8	4,6	4,1	2,9	3,9
համացանցի մատչելիությունից	3,1	3,9	4,4	3,3	4,2	4,0	3,0	3,7
գրադարանում առկա մասնագիտական գրականությունից	3,2	3,4	4,0	3,5	4,7	3,6	2,8	3,8
գրադարանի ընթերցասրահի սպասարկումից	3,8	4,0	4,4	3,6	4,7	4,3	2,8	4,1
Էլեկտրոնային գրադարանից	3,4	4,3	4,4	4,0	4,7	3,9	3,1	4,0
շրջանավարտների հետ տարվող աշխատանքներից	3,1	4,5	4,4	3,0	4,7	4,3	3,4	4,0

Մասնաճյուղի և ֆակուլտետների ղեկավարման և պրոֆեսորադասախոսական կազմի վերաբերյալ շրջանավարտների կարծիքը հիմնականում բարձր է (բացառությամբ ԻԿՄ, Պատմություն և Դիզայն կրթական ծրագրերի շրջանավարտների): Այստեղ նույնպես անհրաժեշտ է պարզել պատճառները, ինչը ստեղծել է անբավարարվածության մթնոլորտ: Այստեղ հակված ենք մտածելու, որ շրջանավարտներն արտահայտել են ավելի շուտ սուբյեկտիվ կարծիք, որի համար կան տարբեր պատճառներ:



Ակնհայտ է, որ մեկ-երկու կրթական ծրագրի շրջանավարտների, կամ ուղղակի անհատների սուբյեկտիվ կարծիքներն անդրադարձել են միջին գնահատականների վրա: Թվում է, թե բավարարվածության այս արդյունքներն ընդհանուր առմամբ բարձր չեն, և Մասնաճյուղը, ֆակուլտետները և բոլոր ստորաբաժանումները հաջորդ ուստարվա համար ունեն լուծելու և բարելավելու բավականին խնդիրներ: Սակայն հաջորդ արդյունքները հուսադրող են և կարծես մեղմացնում են ընդհանուր տպավորությունը:

Այն է, ԵՊՀ ԻՄ-ում ստացած իրենց կրթությունը շրջանավարտները գնահատել են բարձր (միջին գանահատականը **4.5**) և նրանց **94%-ը** խորհուրդ կտա իր մերձավորներին և ընկերներին ընդունվել Մասնաճյուղ, ինչը վերջին 5 տարիների համար բավականին բարձր ցուցանիշ է:









Այսինքն, համադրելով ստացված արդյունքները կարելի է հանգել հետևյալ եզրակացության. թեպետ առանձին գործընթացներից և ռեսուրսներից շրջանավարտները բավարարված չեն, սակայն գոհ են Մասնաճյուղում ստացած իրենց կրթությունից և ցանկանում են, որ իրենց ընկերներն ու բարեկամները նույնպես սովորեն ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում:

Ամփոփելով Մասնաճյուղում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության ուսումնասիրության արդյունքները նշենք հատկապես կրթության հետ առնչվող կարևոր և նկատելի հետևյալ խնդիրները.

1. տեսական գիտելիքները գործնականում կիրառելու կարողությունների ցածր մակարդակ, որն ուսանողների մոտ զգացնել է տալիս հատկապես պրակտիկաների ժամանակ, նաև մասնագիտական գործունեություն սկսելուց,
2. օտար լեզվի իմացության ցածր մակարդակ, որը դժվարացնում է օտարալեզու գրականության հետ աշխատանքը,
3. մասնագիտական գրականության բացակայություն, մասնավորապես կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողների համար,
4. ոչ մասնագիտական դասընթացների մեծ քանակ,
5. գործնական դասընթացներին հատկացված քիչ ժամաքանակ,
6. օբյեկտիվ և թափանցիկ գնահատման ապահովում և այլն:

Ներկայացված խնդիրների և այլ խնդիրների լուծման համար շրջանավարտներն առաջարկում են.

1.	**<u>ԻԿՄ</u>** 1. Նվազեցնել ոչ մասնագիտական առարկաների քանակը, 2. Ավելացնել նոր մասնագիտական դասընթացներ, որոնք կզարգացնեն ալգորիթմական մտածողությունը, 3. Ձեռ բերած լավ տեսական գիտելիքները գործնականում կիրառելու կարողությունները բարելավելու համար ավելացնել ծրագրավորման գործնական դասընթացների ժամաքանակը: **Նշենք, որ «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրի վերանայման արդյունքում ավելացվել են ծրագրավորման գործնական դասընթացների ժամաքանակները, ներառվել են նոր մասնագիտական և կիրառական դասընթացներ:**
2.	**<u>Ֆինանսներ</u>** 1. Կրթությունը դարձնել ավելի պրակտիկ՝ դասընթացներում քչացնելով դասախոսությունների ծավալը, 2. Ավելացնել պրակտիկաների քանակը, 3. Ուսուցանել հաշվապահական ծրագրեր: **Նշենք, որ «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի վերանայման արդյունքում «Հաշվապահական հաշվառում» դասընթացի ժամաքանակներն ավելացվել են, մասնավորապես ավելացվել են գործնական դասընթացների ժամաքանակները և ուսուցանվում են ՀԾ-եր :**

3.	**Պատմություն** 1. Շատացնել ճանաչողական և մասնագիտական այցերը և պրակտիկ դասերը, 2. Հետազոտական աշխատանքներում ներառել հստակ ուսումնասիրություններ՝ հիմնված այցերի և հետազոտությունների վրա, 3. Ոչ մասնագիտական առարկաները ներառել միայն առաջին կուրսում, 4. Քննությունների ժամանակ գնահատել վերլուծելու կարողությունները, ոչ թե տարեթվերը կամ ֆիքսված տվյալները հիշելը, և որ դրանք չազդեն գնահատականի վրա:
4.	**Օտար լեզու և գրականություն** 1. Շատացնել պրակտիկաները, մասնավորապես «Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի համար, 2. Խոսակցական կարողությունները զարգացնելու համար ունենալ ավելի շատ speaking դասեր, օտար լեզվով կազմակերպված բանավեճեր և քննարկումներ:
5.	**Դիզայն** 1. Ավելացնել «Գծագրություն» և «Եռաչափ մոդելավորում» առարկաների ժամաքանակը, 2. Պրակտիկաները իրականացնել դիզայներական կենտրոններում, 3. Համակարգիչների պարամետրերը բարելավել համապատասխան ծրագրեր ներդնելու համար:

Նշենք, որ շրջանավարտների կողմից ներկայացված մի շարք խնդիրներ լուծվել են մասնագիտությունների կրթական ծրագրերի վերանայման ժամանակ:

Բացի խնդիրների մասին խոսելուց շրջանավարտները հանդիպում-քննարկումների ժամանակ իրենց գոհունակությունն ու երախտագիտությունն են հայտնել ԵՊՀ ԻՄ-ին ջերմ մթնոլորտի, բարձրագույն և որակյալ կրթության, փայլուն մասնագետների և ուսանողակենտրոն գործունեության համար:

Հարցման արդյունքներն առավել մանրամասն, ըստ կրթական ծրագրերի և միջին որակական գնահատականների ներկայացված են արդյունքների առանձին ֆայլում:

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժինը շրջանավարտների բավարարվածության արդյունքներն ուղարկել է բոլոր ֆակուլտետներ, ամբիոններ, ուսանողական կառույցներ և ուսումնական գործընթացի հետ առնչվող բոլոր ստորաբաժանումներին՝ ուսումնասիրելու, հետևություններ կատարելու և համապատասխան խնդիրների լուծման համար առաջարկություններ ներկայացնելու համար:

Բաժինը, նոր ուսումնական տարվա սկզբին ամբիոնների հետ միասին նշված խնդիրների շուրջ կկազմակերպի հանդիպում-քննարկումներ ուսանողների հետ՝ դրանց հնարավոր լուծման տարբերակներ ներկայացնելու համար:

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին